ՀԱՍՏԱՏՈՒՄԵՄ

Տնօրեն՝ /Գ. Այվազյան/

«01» 09 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

<<Երևանի հ.108 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

Vա դասարան

ուսումնականհաստատությանանվանումը,դասարան

Մարիամ Հրայրի Զաքարյան

դասղեկիազգանունը,անունը,հայրանունը

«2022-2023»ուստարի

Կրթականդաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն(դասարանիընդհանուրբնութագիրը)

Vա դասարանում սովորում են 30 աշակերտ, 12 աղջիկ, 18՝ տղա: Աշակերտներն ատիվ են, հետաքրքրասեր, հոգատար միմյանց նկատմամբ: Դասարանում չկան ուսումնական դժվարություններ ունեցող աշակերտներ: Ծնողները ևս ներգրավված են ուսումնական գործընթացում՝ պահպանելով դպրոց- ընտանիք սերտ համագործակցությունը:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները.

ա/ Հետևողականություն վարքի և ուսումնական առաջադիմության հանդեպ,
բ/Սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական կարողությունների զարգացում
գ/Ճանաչողական հմտությունների զարգացում (ուշադրություն, հիշողություն, պատկերացում, ընկալում, տրամաբանություն)
դ/Միջանձնային հարաբերությունների և համախմբվածությանն ուղղված աշխատանքներ:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 -Հոգևոր դաստիարակություն
Այս նպատակով պետք է աշակերտներին ուսուցաննել,որ հոգևոր դաստիարակությունը մեզ հույս, ուժ, բարություն ձգտում, կյանքի արժևորում սովորեցնող միջոց է: Քրիստոնեական արժեքների սերմանման նպատակով կազմակերպել այցելություններ պատմամշակութային կոթողներ, իրականացնել զրույցներ:

3.2 –Գեղագիտական դաստիարակություն
Գեղեցիկը ճանաչելու, զգալու, ինչպես նաև գեղագիտական ունակությունների զարգացման նպատակով իրականացնել թեմատիկ զրույցներ: Բացատրել գեղեցիկի և բարու դերն իրականության մեջ: Սովորոցնել վարվեցողության նորմերը, էթիկայի կանոններ:

3.3 –Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Այս նպատակով անհրաժեշտ է ունենալ պարբերաբար քննարկումներ հայրենասիրական ոգու սերմանման համար: Բացատրել, որ հայրենիքի պատիվն է կարևորը և դրան դրան պաշտպան կանգնելը:

3.4 –Ֆիզիկական դաստիարակություն

Այս նպատակով աշակերտներին սովորեցնել պահպանել օրվա ռեժիմ, կրթել, մարզել իրենց մարմինը: Հասնել նրան, որ ամենօրյա մարզումները դառնան օրվա անբաժան մասը:

3.5 –Աշխատանքային դաստիարակություն

Այս նպատակով նախատեսվում է աշակերտներին մասնակից դարձնել տարաբնույթ կամավորական աշխատանքների: Ծանոթացնել աշխատանք, մասնագիտություն տերմինների և իրենց բովանդակության հետ, արժևորել և կարևորել դրանք:

3.6 –Բնապահպանական դաստիարակություն

Ծանոթացնել առկա բնապահպանական խնդիրների հետ, սովորեցնել խնամքով վարվել բնության հետ, սիրել սեփական ձեռքով ստեղծածը՝ բարիք բերող ծառը, բույսը, մթերքը: Մաքուր պահել շրջակայքը և արժևորել:

3.7 -Դպրոց-ընտանիք կապը

Ընտանիք-դպրոց կապի ամրապնդման նպատակով անհրաժեշտ է գրագետ և պլանավորված աշխատանք ծնողների հետ, նրանց մշտական ներգրավվածությունը ուսումնական և դաստիարակչական գործընթացում:

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուս/շ	Ուս.աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարող
I	<<Ամառային ճամբար>> այս վարժության նպատակն է աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողականության գաղափարը	02.09.2022	Դասղեկ
II	<<Քանի լեզու գիտես այնքան մարդ ես >> թեմայով զրույց: Ձևավորել բազմակարծություն և աշխարհահայացք	09.09.2022	Դասղեկ
III	<<Եթե ես լինեի …>> թեմայով քննարկում: Նապատակն է վեր հանել կարողությունները և հմտությունները:	16.09.2022	Դասղեկ
IV	<<Կարողությունների հստակեցում >> թերթիկի միջոցով հստակեցնել թե ինչ կարողություններն են ավելի զարգացած:	23.09.2022	Դասղեկ
V	<< Ես էլ քեզ նման եմ >> թեմայով զրույցը հնարավորություն կտա ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	30.09.2022	Դասղեկ
VI	<< Բնական պաշարներ >> թեմայով քննարկումը կձևավորի գիտելիքներ արդյունաբերության տարբեր ոլորտների վերաբերյալ:	07.10.2022	Դասղեկ
VII	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>> նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:	14.10.2022	Դասղեկ
VIII	<< Պետական խորհրդանիշներ>> թեմայով զրույց:Նպատակն է աշակերտներին ներկայացնել ծագման և ձևավորման ուղին:	21.10.2022	Դասղեկ
IX	<< Էկոլոգիական հիմնախնդիրներ >> : Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ավելի ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին:	04.11.2022	Դասղեկ
X	<< Պոլիեթիլենի տոպրակներն ու շրջակա միջավայրը>> ասոցացնել հին և նոր դասը տալ խնդրին նոր լուծումներ:	11.11.2022	Դասղեկ
XI	<< Գնահատիր ինքդ քեզ >> նպատակն է արժևորել արժե համա կարգ ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն:	18.11.2022	Դասղեկ
XII	<< Գնահատվող մրցույթ >> թեման հնարավորություն կընձեռի ճանաչել իրենց շրջապատող անձանց և շտկել թյուր կարծիքներ ը:	25.11.2022	Դասղեկ
XIII	<< Բնական աղետներ >> ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները:	02.12.2022	Դասղեկ
XIV	<< Կարող եմ օգտակար լինել >> թեման հնարավորություն կտա	09.12.2022	Դասղեկ

	աշակերտների մոտ ձևավորել բարին և դրական հատկանիշնե ը:		
XV	<< Ազգ և պետություն >> թեմայով բաց քննարկում և վերլուծությ ուն:	16.12.2022	Դասղեկ
XVI	<< Փոքրիկ պատմություններ անհատի և հասարակության խնդ իրների մասին >> նպատակն է աշակերտներին տեղեկացնել թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել:	13.01.2023	Դասղեկ
XVII	<< Ազգային և միջազգային տոներ>> նպատակն է հստակեցնել ազգային տոների առանձնահատկությունները և ազդեցությունները:	20.01.2023	Դասղեկ
XVIII	<< Եկեղեցին և ազգը >> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	27.01.2023	Դասղեկ
XIX	<< Լրատվամիջոցներ և կերպարներ >> թեմայի միջոցով լուսաբանել արդի ժամանակաշրջանում լրատվամիջոցների դերը:	03.02.2023	Դասղեկ
XX	<< Բարեկամներ և թշնամիներ >> քննարկման միջոցով կներկայացվի հայ-ադրբեջանական խնդրի ծագման պատճառները:	10.02.2023	Դասղեկ
XXI	<< Ինչպես վարվել աղբի հետ >> օգնել սովորողներին գիտակցելու աղբի և թափոնների վնասակար ազդեցությանը բնության և մարդու առողջության վրա:	17.02.2023	Դասղեկ
XXII	<< Պետք է արդյոք, խնայել >> խթանելով աշակերտների ստեղծագործական մտածողությունը ձևավորել բնության և բնական պաշարների հանդեպ խնայող վերաբերմունք	24.02.2023	Դասղեկ
XXIII	<< աշխատակից ենք ընտրում >> սովորողները կհասկանան՝ թեև տարբեր մասնագիտություններ պահանջում են տարբեր կարողություններ և որակներ , այնուամենայնիվ կան որակներ և կարողություններ , որ կարևոր են բոլոր մասնագիտությունները:	03.03.2023	Դասղեկ
XXIV	<< Պատասխանատու քաղաքացի >> աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան թե ինչպես պետք է լինի ցանկացած քաղաքացի:	10.03.2023	Դասղեկ
XXV	<< Նախապաշարումների ոստյան >> ներկայացնել թե ինչպես է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը: Իրավիճակը հաղթահարելու ուղիներ որոնել:	17.0.20323	Դասղեկ
XXVI	<< Ապագայի ծառը >> խթանում է վերլուծելու	24.03.2023	Դասղեկ

	պատճառահետևանքային կապերը դիտարկելու, դասակարգելու հմտությունները		

XXVII	<< Ինչ է պետք ներառումը >> աշակերտների մոտ ձևավորել հանդուրժողական վերաբերմունք հատուկ կարիքավոր մարդկանց նկատմամբ:	07.04.2023	Դասղեկ
XXVIII	<< Քաղաքացիական ինքնություն >> կիմանան ինչ է քաղաքացիական ինքնությունը կհասկանան թե քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց հետ:	17.04.2023	Դասղեկ
XXIX	<< Սպառողների իրավունքներ >> ներկայացնել և ձևավորել իրենց իրավունքները , որպես սպառողներ:	21.04.2023	Դասղեկ
XXX	<< Հայոց Մեծ եղեռն >> աշակերտներին ներկայացնել թուրքերի կատարած ոճրագործությունը : Նրանց մոտ սերմանել հայրենասիրություն:	28.04.2023	Դասղեկ
XXXI	<< Ասացվածքի ամբիոն >> աշակերտներին ծանոթացնել ժողովրդական բանահյուսության մի տեսակին՝ ասավածքին և նրանց մեջ զարգացնել բարոյական արժեքներ մարդկանց նկատմամբ հարգանք մարդասիրություն:	05.05.2023	Դասղեկ
XXXII	<<Ազգային զարթոնք>> ներկայացնել հայերի մասնակցությունը մի շարք մարտական գործողություններին: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:	12.05.2023	Դասղեկ
XXXIII	<< Եկեղեցին և ազգը >> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	19.05.2023	Դասղեկ
XXXIV	<< Եկեղեցին և ազգը >> քննարկման միջոցով	26.05.2023	Դասղեկ

	աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:		

ԴԱՍԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱԴՊՐՈՑԱԿԱՆ,ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Անցկացման ժամկետը	Միջոցառման անվանումը	Անցկացման վայրը
01.09.2022	Գիտելիքի օր	Դպրոցի բակ
12.12.2022	Այց <<Երևանի պատմության թանգարան>>	Երևանի քաղաքապետարան
27.01.2023	Հայոց բանակի նվիրված միջոցառում	Դպրոցի նախասրահ
07.03.2023	Մայր իմ սիրելի, ինձ գրկիր ամուր… Բաց դաս-միջոցառում	Դասասենյակ
15.05.2023	<<Ընտանիքը բարձրագույն արժեք է>> նվիրված ընտանիքի միջազգային օրվան	Համակարգչային դասասենյակ

ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱՆ

Անցկացման օ/ա/տ	Միջոցառման բովանդակությունը	Ծանոթություն
01.09.2022	Արժևորեք գիտելիքը	Զրույց- քննքարկում
08.09.2022	Մենք խումբ ենք և միասնական	Զրույց, վարժություն
16.09.2022	Աղբի տեսակավորում	Ֆիլմաշարի դիտում-քննարկում
14.11.2022	<<Կոնֆլիկտ, հաղթահարման ուղիները>>	Դերային վարժություն
21.12.2022	<<Հիգիենա>> քննարկում և տղաների, և աղջիկների հետ	Բուժքրոջ մասնակցությամբ
25.01.2023	Հայ քաջ պատանի	Զրույց-քննարկում
17.02.2023	Մեր լեզուն մենք ենք որ կանք	Նվիրված Մայրենիի օրվան
11.03.2023	Հայ հերոսածին մայրեր	Հայ մոր կերպարի քննարկում
26.04.2023	Մոլորակը մեր տունն է	Զրույց-քննարկում
16.05.2023	Ընթերցելը մտքի մարզանք է	Ընթերցանության ժամ գրադարանում

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍԱԼՍՈՒՄՆԵՐ

Դասալսման օրը	Առարկան,դասավանդող ուսուցիչը	Դասի թեման	Դասալսման նպատակը
0809.2022	Մայրենի Ա. Մովսիսյան	<<Հայոց լեզուն>> բանաստեղծություն	Վարքի վերահսկողություն, ներգրավվածություն
12.09.2022	Կերպարվեստ Ա.Մալքյան	Զրույց անիմալիստական ժանրի մասին:	Արվստին մոտ աշակերտների բացահայտում
14.09.2022	Երաժշտություն Լ.Թովմասյան	Երաժշտությունը եւ գրականությունը Ունկնդրում `«Հովվի կանչը» հայկական ժողովրդական մեղեդին շվիի կատարմամբ Երգեցողություն `«Կաքավիկ»,«Ա՛խ,ի՛նչ լավ են»	Երաժշտական տվյալներով աշակերտների բացահայտում
22.11.2022	ՀԵՊ Շ.Բաբայան	Մարգարեական գրքեր:	Վարքի վերահսկողություն, ներգրավվածություն
21.12.2022	Մայրենի Ա. Մովսիսյան	Օսկար Ուայլդի 《Աստղամանուկը》 հեքիաթը: (մաս 3) Հ-ի ուղղագրությունն ու ուղղախոսությունը:	Հեքիաթաթերապիա, հոգեբանի մասնակցությամբ
18.01.2023	Ազգային երգ և պար Ս.Եսայան	Ազգային ավանդական պարերի տեսակներ	Արվստին մոտ աշակերտների բացահայտում

ԴԱՍՂԵԿԻ ԺԱՄ

1-ինկիսամյակ		2-րդկիսամյակ	
Շաբաթվա օրը	դասաժամը	Շաբաթվա օրը	դասաժամը
ՈԻրբաթ	6-րդ դասաժամ	Ուրբաթ	6-րդ դասաժամ

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

Անցկացման օրը	Թեման	Քննարկվող հարցերը	Ուսուցչի անուն,ազգանուն	ծանոթություն
30.08.2022	Ծանոթացում ծնողների հետ	Դասարանի համախմբվածություն, Ընտանիք-դպրոց կապ	Մարիամ Զաքարյան	

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը	ծանոթություն
23.09.2022	1.Վարքի և ուսումնական գործընթացի ընթացիկ գնահատում 2.Ծնողական խորհրդի նախագահի ընտրություն	Ծնողներին ներկայացվելու են մեկամսյա ուսումնառության ընթացքում աշակերտների ուսուցման խնդիրները, առաջադիմությունը: Աշխատանք է տարվելու վարքի և վարվեցողության նորմերի բարելավման նպատակով:	Կատարող՝ դասղեկ
14.10.2022	Ընթացիկ հարցերի քննարկում	Երեխայի կողմից լավ կատարված աշխատանքի խրախուսում և գովաբանում ծնողի կողմից.	Կատարող՝ դասղեկ
23.12.2022	I կիսամյակի ամփոփում	Կիսամյակի ամփոփում և արդյունքների ներկայացում: Ուսումնառության որակի բարձրացման համար ծնողի ճիշտ համագործակցությունը դպրոցի հետ	Կատարող՝ դասղեկ